

Հնազանդութիւնը կ'ենթադրէ որեւէ դրական գործողութիւն՝ կա՛մ ներսէն, կա՛մ դուրսէն: Ներսէն օրինակ՝ կամքի հնազանդիլը, մտքի լաւ առաջադրութեան եւ կամ բան կամենալն է ըստ հրամայողին կամքին: Իսկ դուրսէն օրինակ՝ աչքերով նայիլ, լեզուով խօսիլ, ձեռքերով գործել, եւ այլն:

Ուրեմն հնազանդութեան ծառայութիւնը որեւէ դրական գործողութիւն է, եւ մտքէն կամ հրամայողէն առաջադրուած վայելուչ, օգտակար ու բարի ամէն ինչի գործադրիչը հնազանդութիւնն է:

Հնազանդութեան կարծիք չունի. անոր կամքը հրամայողի կամքն է, եւ ասով ոչ թէ կը ջնջուի մարդուն անձնիշխանութիւնը, այլ աւելի կը հաստատուի՝ որովհետեւ մարդու համար մեծ իշխանութիւն է իր կամքին այնպէս կառավարել, որ հնազանդի մտքի ամէն հրահանգի, որ միտքը իրեն յատուկ ճանաչմամբ օգտակար կը համարէ եւ մարդուն կ'առաջադրէ կատարել: Ապա թէ ոչ մարդը անկարող կ'ըլլար իր կամքը շարժելու եւ կը վերանար անձնիշխանութեան ազատութիւնը, կոյր բաղձանք ըլլալով, անկարող կ'ըլլար բարին ու չարը ընտրել, եթէ մտքի չհնազանդէր:

Ուստի երբ միտքը, տեսնելով իր անձին օգուտը, կը յորդորէ կամքին ուրիշի կամքին հնազանդիլ եւ այնուհետեւ ան ոչ թէ ուրիշին կամքին հնազանդիլ...

Շարունակելի

ԱՏԱՄՆԱՑԱԻ ՀՄԱՅ
Շատ յաճախ մարդիկ կը գերազանահատեն Ֆիզիքական ամրութիւնը: Աստուած առաջին հերթին մեր հոգիով կը գրադի: Անոր համար մարդոց հոգին շատ աւելի կարեւոր է, քան կեանքը: Իր հերթին՝ Սատանան մարմինը եւ առողջութիւնը ա՛յնքան կարեւոր կը դարձնէ մարդուն համար, որ վերջինս այդ առողջութեան համար կը զոհէ հոգին ու յաւերժական երանութիւնը: Ասիկա անհեթեթութիւն ու խելայեղութիւն է:

Գրուած չէ՞ միթէ. «Գիտենք, թէ Աստուած բարին համար գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք կը սիրեն զինք եւ իր ծրագրին համաձայն իրեն կանչուած են» (Հռոմէացիներուն 8:28): Բայց մարդիկ այդ մասին լսել չեն ուզեր: Ոեւէ մէկը չ'ուզեր հիւանդութիւնը համբերութեամբ կրել: Կ'ուզեն ամէն գնով ազատիլ հիւանդութենէն, խտրութիւն չընելով միջոցներու միջեւ: Այո՛, ցաւը դուրս կը մղեն, բայց դժուարութեամբ կը տանին մեղքին բեռը:

Ոեւէ մէկը չի կասկածիր բուժականերու ունեցած մեծ յաջողութեան վրայ: Ռուր քաղաքէն հաւատացեալ կին մը կը գրէ. «Լսե՞ր էք որ կախարդութեան շնորհիւ կարելի է ազատիլ արբեցութենէն: ...

Շարունակելի



ՅԻՍՈՒՍ ԳՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 7.14-24

ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ս. ԽԱԶԻ

Տաղաւարահարաց տօնակատարութեան

մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաները կը զարմանային եւ կ'ըսէին. «Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»:
Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս զրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծմէ՞ է այս վարդապետութիւնը, թէ ես ի՞մ հեղինակութեամբս կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք զրկողին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ. սակայն ձեզմէ ոչ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»:
Ժողովուրդը պատասխանեց. «Դիւահա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»:
Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեր էք: Մովսէս հրահանգեց թշփատել ձեր զաւակները - թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը թշփատէք Շաբաթ օրով: Եթէ մէկը կը թշփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով: Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէ՛ք»:

ԵՐԵՒՄԱՆ Ա. ԽԱՉԻ

Յինանց հինգերորդ կիրակին կը կոչուի Երեւման խաչ եւ յիշատակն է Երուսաղէմ՝ խաչի նշանի երեւումին:

351 թուի, Մայիսի 7-ին, Կիւրեղ Երուսաղէմացի հայրապետի ժամանակ, Երուսաղէմի մէջ օր ցերեկով երկինքի վրայ կ'երեւի խաչի նշանը՝ Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռը: Լուսապայծառ խաչի նշանը կ'երեւի բոլորին: Ի տես զարմանահրաշ այս երեւոյթին, ժողովուրդն ու եկեղեցականները եկեղեցի կը մտնեն Աստուծոյ գոհութիւն եւ փառք մատուցանելու համար:

Կիւրեղ եպիսկոպոսը զարմանահրաշ այս դէպքը կը տեղեկացնէ Բիւզանդիոնի Կոստանդիանոս Կայսեր, եւ անոր կը խրախուսէ քրիստոնէական իր ամուր հաւատքին համար: Կիւրեղ հայրապետի վերոյիշեալ գրութիւնը թարգմանուած է հայերէնի եւ կ'ընթերցուի Երեւման խաչի տօնի օրը:

Երեւման խաչի սրբոյ տօնը յատուկ է միայն հայերուն եւ յոյներուն: Կաթողիկէ եկեղեցին այս անունով խաչի տօն չունի:

Երեւման խաչի տօնը յատուկ շարական չունի, այլ նոյն օրը կ'երգեն խաչի միւս տօներու շարականները, որոնցմով կը փառաբանուի խաչը:

ԳԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԵԹԷ ՀԱՒԱՏՔՈՎ ԱՂՕԹԵՆՔ, ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ՕԳՆԷ ՄԵՉԻ

1.- Ու նեղութեան օրը Զիս կանչէ. ես քեզի պիտի ազատեմ ու դուն զիս պիտի փառաւորես (Մաղմոս 50.15):

2.- Տէրը քու պահապանդ է. Տէրը քու աջ ձեռքիդ քով քու հովանիդ է: Յերեկը արեգակը քեզ պիտի չզարնէ, ո՛չ ալ գիշերը՝ լուսինը: Տէրը քեզ ամէն չարէն պիտի պահէ, քու անձդ պիտի պահպանէ: Տէրը քու ելլելդ ու մտնելդ պիտի պահպանէ ասկէ յետոյ մինչեւ յաւիտեան (Մաղմոս 121.5-8):

3.- Ասոնք խօսեցայ ձեզի, որպէսզի ինձմով խաղաղութիւն ունենաք: Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին: (Յովհաննէս 16.33: Կարդայ նաեւ՝ Մատթէոս 11:25-30):

ԱՌԱԿՆԵՐ

Իմաստութիւնը ցանապարհներուն սկիզբը կը փառաբանուի եւ հրապարակներուն վրայ բարձրաձայն կը հռչակուի. պարիսպներուն բարձունքէն կը փարոգուի, ամրոցներուն դռներուն կը յայտարարուի եւ փառաբանուի դարպասներուն համարակօրէն կը խօսուի (Առակաց 1.20-21):

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ԱՇՏԱՆԱԿ

Փայտէ կամ մետաղէ որեւէ մեծութեամբ կամ ձեւով կարասի մը՝ որուն վրայ մոմեղէն կը դրուի՝ հաստատուն ու շիտակ կենալու եւ վառուելու համար: Աշտանակները հասարակ տուներու կահաւորութեան մէջ ալ կը գրտնուին ու ամէնուն ծանօթ են, եւ աւելի բացատրութեան պէտք չի մնար: Աշտանակները տեսակ-տեսակ են իրենց մեծութեան համեմատ, եւ ձեւի ու նիւթի եւ արհեստի տարբերութեան վրայ խօսիլ աւելորդ է բոլորովին: Աշտանակները գլխաւորաբար կը գործածուին սեղանի վրայ, ուր սովորաբար պիտի գտնուին տասներկու մեծ աշտանակներ իրենց յարմար մոմեղէնով: Աշտանակ մը վառուած մոմեղէններով ջահընկալի ձեռնադրութեան ատեն եպիսկոպոսէն կը տրուի նուիրեալին ձեռքը, իշխանութիւն տալով՝ կատարելու եկեղեցոյ լուսաւորութիւնը:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Յոյսը հաւատքին յենարանն է: Վա՛յ անոր, որ այդ երկու անթացուպերէն գրկուած կը մնայ:

Աստուած անգամ յոյսով ապրեցաւ, երբ իր Որդին Գեթսեմանիէն Գողգոթա կը բարձրանար. վաղուան յարութեան յոյսն էր ատիկա:

Յոյսը եւ հաւատքը տկարները հերոս եւ հերոսները Աստուած կ'ընէ:

Հայ եկեղեցին Յոյսը եւ Հաւատքը Մկրտութեան օրը կը դրոշմէ մանուկին ցանկատար Սրբալոյս Միլոնով:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ՓՈՐՉՈՒԹԵԱՆՑ ՄԷՉ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՄԱԿԷՆ 12.1-7

Ուրեմն մենք ալ, որ այսքան բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք, վանենք ամէն խոչընդոտ եւ մէկ կողմ ձգենք մեղքը, որ մեզ դիւրաւ կը պաշարէ, եւ համբերատարութեամբ պայքարինք մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ: Մեր աչքերը յարենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով թէ ի՞նչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչի վրայ մեռնիլ եւ Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ:

Որպէսզի երբեք չյուսալքուիք եւ չտկարանաք, մտաբերեցէ՛ք, թէ Յիսուս ինչպիսի համբերութեամբ կրեց մեղաւորներու հակառակութիւնները: Դուք տակաւին ձեր արիւնը թափելու չափ դիմադրութիւն ցոյց չտուիք մեղքի դէմ պայքարին մէջ:

ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՄԱԿԷՆ 12.5-9

... Ուստի համբերութեամբ ընդունեցէ՛ք Աստուծոյ խրատը գիտնալով՝ որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՞յ զաւակ մը, որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ: Ընդհակառակը, եթէ Աստուած ձեզ չյանդիմանէ՝ ինչպէս կ'ընէ իր բոլոր որդիներուն, կը նշանակէ՝ թէ իր գաւակները չէք եւ խորթ էք իրեն: Մեր մարմնաւոր հայրերը երբ մեզ յանդիմանեն, կը դադրի՞նք զիրենք յարգելէ: Ո՛չ: Ուրեմն, որքան աւելի եւս հնազանդ պէտք է ըլլանք հոգիներու հօր, որպէսզի կեանք ունենանք:

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
17.1-15**

Ամփիպոլիս եւ Ապոդոնիա քաղաքները շրջելէ ետք Պօղոս եւ Շիդա Թեսաղոնիկէ եկան, ուր հրեաներու ժողովարան մը կար: Պօղոս ըստ իր սովորութեան ժողովարան գնաց, եւ երեք Շաբաթ օրեր անոնց քարոզեց: Կր բանար ու կը բացատրէր Գիրքերը, անոնցմով կ'ապացուցանէր թէ ինչպէս Քրիստոս պիտի չարչարուէր ու մեռնէր: «Այն Յիսուսը գոր ես ձեզի կը քարոզեմ, ա՛ն է Քրիստոսը, խոստացւած Փրկիչը»: Թեսաղոնիկեցիներէն ումանք հաւատացին եւ Պօղոսի ու Շիդայի յարեցան: Նոյնպէս անոնց յարեցան շատ մը աստուածապաշտ յոյներ եւ նկատառելի թիւով երեւելի կիներ:

Հրեայ առաջնորդներ նախանձեցան, եւ փողոցներէն քանի մը դատարկապորտ անօրէններ հաւաքելով ամբոխ կազմեցին, ամբողջ քաղաքը խռովեցին եւ Յասոնի տան վրայ խուժեցին՝ Պօղոսն ու Շիդան բռնելու եւ ժողովուրդին առջեւ հանելու համար: Բայց երբ գնունք չգտան, Յասոնն ու քանի մը ուրիշ հաւատացեալներ քաղաքին տարին քաղաքի իշխաններուն առջեւ, պոռալով. «Այն մարդիկը որոնք ամբողջ աշխարհը իրար անցուցին, հիմա մեր քաղաքը եկեր են, եւ Յասոն իր տունը առեր է գիրքնէ: Ասոնք բոլորը կայսեր օրէնքներուն հակառակ կը գործեն, որովհետեւ ուրիշ թագաւոր մը կը նանչնան, Յիսուս անունով»: Այս խօսքերով անոնք խռովեցուցին ամբոխը եւ քաղաքի իշխանները: Սակայն իշխանները Յասոնէն եւ միւս քրիստոնեաներէն երաշխաւորութիւն առնելով ազատ արձակեցին գնունք:

**ՅՈԿՅԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
1.1-10**

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն է: Անիկա նոյնինքն կեանքն էր որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած յոյս է. բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ՝ եթէ ըսենք «հաղորդակից ենք իրեն» եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ եթէ Աստուծոյ յոյսին մէջ քայլենք, ինչպէս ինք յոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒՄԾԱՀՈՒՆԶԷՆ: ՄԻՇՏ
ԱՍՏՈՒՄԾԱՀՈՒՆՉ ԿԱՐԴԱՆՔ:**